Մխիթար Գոշ

Ապաշխարող գայլերը

Գայլը ծերանալով, գնում է ոչխարի հոտի մոտ ու ասում.

Այժմ ապաշխարող եմ և շատ եմ ձեզ վշտացրել, ուստի ուզում եմ գալ ու ձեր տան ավլողը դառնալ, որպեսզի թողության արժանանամ, պահպանեմ ձեր մանուկներին ուրիշ գայլերից:

Եվ ուրախանալով, ոչխարները շներին ասում են.

Այլևս մի հալածեք նրան:

Գայլը մնում է այդտեղ, համբերում մինչև մեծանում են գառները, ապա սկսում է հոշոտել և ուտել նրանց: Ի վերջո, շատերը նկատելով այդ, սատկեցնում են նրան:

Առակս այսպիսի խրատ է տալիս, շուտ չհավատալ չարագործին: